

Ընտանիքի պլանավորման ծրագրերի առաջնային նպատակն է ապահովել կանանց առողջությունը, սեռական ներդաշնակությունը, նպաստել հավասարակշռված մայրության և հայրության կայացմանը: Հակաբեղմնավորման մեթոդներն օգնում են կանանց և տղամարդկանց իրականացնել որոշակի թվաքանակով երեխաներ ունենալու իրենց ցանկությունը՝ սոցիալական, տնտեսական և ֆինանսական բարեկեցության իրենց իսկ նախընտրած ժամանակահատվածում: Ընտանիքի պլանավորման արդյունավետությունը կախված է հակաբեղմնավորման մեթոդների իմացությունից և այդ մեթոդների մատչելիությունից՝ բավարարելու համար տարբեր պահանջներով հնարավոր սպառողների լայն շրջանակ: Մեթոդների մատչելիությունը, իր հերթին, կախված է ծառայություն մատուցողների որակական, քանակական հատկանիշներից, ինչպես նաև ֆինանսական և տեխնիկական միջոցների առկայությունից: 2002 թվականին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է օրենք «Վերարտադրողական առողջության և մարդու վերարտադրողականության իրավունքի» մասին: Օրենքի համաձայն, Հայաստանում հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումը՝ ներառյալ կանավոր վիրաբուժական ամլացումը (ստերիլացումը), համարվում է օրինական:

Սույն գլխում ներկայացված ընտանիքի պլանավորման վերաբերյալ հարցերը ներառում են հակաբեղմնավորման մեթոդների իմացությունը, մեթոդների օգտագործումն անցյալում և ներկայում, ձեռքբերման աղբյուրները, չօգտագործման պատճառները, ապագայում օգտագործման ցանկությունը, ընտանիքի պլանավորման վերաբերյալ տրամադրվող տեղեկատվության ազդեցությունը և վերաբերմունքն ընտանիքի պլանավորման նկատմամբ: Չնայած սույն գլխում ներկայացված տեղեկատվության մեծամասնությունը վերաբերվում է կանանց, սակայն որոշ տվյալներ բերված են նաև տղամարդկանց վերաբերյալ, քանզի տղամարդիկ կարևոր դեր ունեն կանանց վերարտադրողական կյանքի նպատակների իրականացման գործընթացում:

5.1 ՀԱՎԱԲԵՂՄԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ

Պտղաբերության վերահսկման վերաբերյալ իմացությունը կարևոր քայլ է հակաբեղմնավորման անհրաժեշտ մեթոդի ճիշտ ընտրության և արդյունավետ օգտագործման առումով: ՀԺԱՀ-2005-ը տեղեկատվություն է հավաքագրել հակաբեղմնավորման մեթոդների իմացության և օգտագործման վերաբերյալ: Այդ տվյալների հավաքագրումը կատարվել է հետևյալ կերպ՝ հարցազրուցավարները նախ հարցվողներին խնդրել են թվարկել հակաբեղմնավորման բոլոր այն մեթոդները, որոնց մասին նրանք երբևէ լսել են: Այն մեթոդների մասին, որոնք չի նշել հարցվողը, հարցազրուցավարը կարդացել է այդ մեթոդների բացատրությունները և ճշտել հարցվողի իմացությունը դրանց մասին: Յուրաքանչյուր այն մեթոդի համար, որը թվարկել կամ որի մասին երբևէ լսել է հարցվողը, հավաքագրվել է տեղեկատվություն նրա (կամ զուգընկերոջ) կողմից այդ մեթոդի երբևէ կիրառման մասին: Եվ վերջապես, կանայք հարցվել են, թե արդյոք նրանք (կամ զուգընկերը) ներկայումս օգտագործում են այդ մեթոդը: Վերլուծություն կատարելու նպատակով աղյուսակում հակաբեղմնավորման մեթոդները խմբավորվել են ըստ 2 տեսակի՝ ժամանակակից և ավանդական:

Աղյուսակ 5.1 Հակաբեղմնավորման մեթոդների վերաբերյալ իմացություն

15-49 տարեկան բոլոր, հարցման պահին ամուսնացած հարցվողների և սեռապես ակտիվ չամուսնացած տղամարդկանց տոկոսը, ովքեր գիտեն հատուկ հակաբեղմնավորման մեթոդների մասին, Հայաստան 2005

Հակաբեղմնավորման մեթոդ	Կանայք		Տղամարդիկ		Սեռապես ակտիվ չամուսնացած ¹
	Բոլոր	Հարցման պահին ամուսնացած	Բոլոր	Հարցման պահին ամուսնացած	
Որևէ մեթոդ	95.1	98.9	97.1	99.0	99.6
Որևէ ժամանակակից մեթոդ	94.5	97.9	97.0	98.8	99.6
Կնոջ ամլացում	24.7	27.6	25.9	31.3	44.2
Տղ. ամլացում	12.2	13.4	22.6	26.0	43.3
Հաբեր	76.5	82.2	52.9	60.4	62.3
ՆԱՍ	85.5	93.5	53.5	67.7	66.7
Ներարկումներ	34.2	37.4	22.7	25.5	36.3
Ինյուլանտներ	8.3	8.8	6.3	7.7	10.5
Տղամարդու պահպանակ	90.7	95.0	96.6	98.5	99.6
Կանացի պահպանակ	20.9	23.0	14.6	17.1	26.7
Դիաֆրագմա	5.9	6.1	7.5	8.6	12.4
Մոմիկ/փրփուր/կրեմ/գել	40.3	45.2	19.2	23.7	21.6
Լակտացիոն ամենորեայի մեթոդ (ԼԱՍ)	14.3	17.6	2.3	2.5	7.1
Շտապ բեղմնականխում	15.6	17.5	20.7	25.9	31.3
Որևէ ավանդական մեթոդ	70.5	90.1	75.5	86.9	92.9
Պարբերաբար ինքնազսպման կամ ռիթմիկ մեթոդ	42.0	52.9	28.2	39.1	35.0
Ընդհատված սեռ. հարաբ.	66.8	87.2	75.0	86.0	92.9
Ժող. մեթոդներ	7.9	11.1	0.5	0.5	1.3
Հարցվողների ծանոթ մեթոդների միջին թիվ	5.5	6.2	4.5	5.2	5.9
Հարցվողների թվաքանակ	6,566	4,044	1,447	815	143

¹ Հարցմանը նախորդող 30 օրվա ընթացքում ունեցել են սեռական հարաբերություն

Ժամանակակից մեթոդներն են՝

- կնոջ ամլացում (ստերիլացում)
- տղամարդու ամլացում (ստերիլացում)
- հակաբեղմնավորիչ հաբեր
- ներարգանդային միջոցներ (ՆԱՍ)
- ներարկումներ
- ինյուլանտներ
- տղամարդու պահպանակ
- կանացի պահպանակ
- մոմիկ/փրփուր/կրեմ/գել
- Լակտացիոն ամենորեայի մեթոդ (ԼԱՍ¹)

Ավանդական մեթոդներն են՝

- պարբերաբար ինքնազսպման մեթոդ (ռիթմիկ մեթոդ)
- ընդհատված սեռական հարաբերություն
- ժողովրդական այլ մեթոդներ:

Աղյուսակ 5.1-ը ցույց է տալիս, որ և՛ կանանց, և՛ տղամարդկանց շրջանում հակաբեղմնավորման մեթոդների մասին իմացության մակարդակը բարձր է: Գրեթե բոլոր հարցվողներն իմացել են հակաբեղմնավորման առնվազն մեկ մեթոդի մասին: Հակաբեղմնավորման մեթոդների իմացության միջին թիվն ընտանիքի պլանավորման մեթոդների մասին իմացության տարածվածության կոպիտ ցուցանիշ է: Ընդհանուր առմամբ, հարցման պահին ամուսնացած կանայք, որոնց հղիության հավանականությունը շատ բարձր

¹ ԼԱՍ-ի վերաբերյալ հարցադրման առումով՝ ՀԺԱՀ-2005-ի հարցաթերթը տարբերվում է ՀԺԱՀ-2000-ի հարցաթերթից: ՀԺԱՀ-2000-ի ժամանակ, եթե հարցվողը ծանոթ չի եղել «Լակտացիոն ամենորեայի» մեթոդին, ապա հարցազրուցավարն ընթերցել է մեթոդի նկարագրությունը: ՀԺԱՀ-2000-ի արդյունքները փաստել են, որ շատ կանայք չփոթել են ժամանակակից ԼԱՍ մեթոդը ժողովրդական՝ կրծքով կերակրման մեթոդի հետ, այսինքն պարզապես կրծքով կերակրում առանց բժշկական ցուցումների և ժամանակային ստույգ ուղեցույցի: Այդ պատճառով, ՀԺԱՀ-2005-ի հարցաթերթում չի ներառվել մեթոդի նկարագրությունը:

է, գիտեն հակաբեղմնավորման առնվազն վեց մեթոդ: Ժամանակակից մեթոդների իմացությունը գրեթե համատարած է: Ամուսնացած տաս կանանցից մոտավորապես ինը լսել են տղամարդու պահպանակի և ՆԱՄ-ի մասին: Ընդհատված սեռական հարաբերությունն ամենահայտնի ավանդական մեթոդն է (87 տոկոս):

Ամուսնացած տղամարդիկ միջինում գիտեն հինգ մեթոդից ավելի՝ մեկ մեթոդով ավելի քիչ, քան ամուսնացած կանայք: Գրեթե բոլոր ամուսնացած տղամարդիկ լսել են տղամարդու պահպանակի և երկու երրորդը՝ ՆԱՄ-ի մասին: Ամուսնացած տղամարդկանց 86 տոկոսը լսել է ընդհատված սեռական հարաբերությունների մասին:

Աղյուսակ 5.2 Հակաբեղմնավորման մեթոդների իմացությունն ըստ հիմնական բնութագրիչների						
15-49 տարեկան հարցման պահին ամուսնացած կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր լսել են առնվազն մեկ հակաբեղմնավորման մեթոդի և առնվազն մեկ ժամանակակից մեթոդի մասին ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005						
Հիմնական բնութագրիչներ	Կանայք			Տղամարդիկ		
	Լսել է որևէ մեթոդի մասին	Լսել է որևէ ժամանակակից մեթոդի մասին	Կանանց թվաքանակ	Լսել է որևէ մեթոդի մասին	Լսել է որևէ ժամանակակից մեթոդի մասին	Տղամարդկանց թվաքանակ
Տարիք						
15-19	98.0	98.0	78	42	42	0
20-24	98.7	98.2	504	(98.0)	(98.0)	50
25-29	99.5	98.7	695	98.9	98.9	126
30-34	99.3	99.1	601	100.0	100.0	131
35-39	98.7	97.5	602	100.0	100.0	129
40-44	99.0	97.8	824	97.9	97.0	180
45-49	98.1	96.6	741	99.1	98.8	198
Բնակավայր						
Քաղաքային	99.6	99.4	2,447	99.2	99.1	499
Գյուղական	97.7	95.8	1,597	98.7	98.2	315
Մարզ						
Երևան	99.8	99.6	1,362	99.3	99.3	288
Արագածոտն	86.1	75.6	196	100.0	100.0	48
Արարատ	98.0	97.2	307	100.0	100.0	60
Արմավիր	99.7	99.7	381	100.0	100.0	80
Գեղարքունիք	99.6	98.1	303	100.0	100.0	51
Լոռի	100.0	99.6	343	(94.1)	(94.1)	54
Կոտայք	98.8	98.2	357	100.0	98.0	81
Շիրակ	99.4	99.2	357	96.2	95.1	55
Սյունիք	100.0	100.0	189	98.6	98.6	38
Վայոց ձոր	98.8	95.2	65	100.0	100.0	19
Տավուշ	99.9	99.7	184	100.0	100.0	42
Կրթություն						
Հիմնական ընդհանուր	95.9	92.8	235	94.4	92.3	75
Միջնակարգ ընդհանուր	98.7	97.6	1,629	99.6	99.6	288
Միջին մասնագիտական	99.0	98.1	1,353	98.9	98.7	241
Բարձրագույն	100.0	99.9	828	100.0	100.0	212
Բարեկեցության մակարդակ						
Ամենացածր	96.5	93.4	764	98.2	96.8	162
Ցածր	98.4	97.6	809	99.3	99.3	162
Միջին	99.7	99.1	788	100.0	100.0	159
Բարձր	99.9	99.8	841	97.5	97.5	151
Ամենաբարձր	99.8	99.5	842	100.0	100.0	181
Ընդամենը	98.9	97.9	4,044	99.0	98.8	815

ԿԶ - Կիրառելի չէ
¹Կնոջ ստերիլացում, տղամարդու ստերիլացում, հաբեր, ՆԱՄ, մերարկուսներ, իմպլանտներ, տղամարդու պահպանակ, կանացի պահպանակ, դիաֆրագմա, փրփուր/մոմիկ/գել, ԼԱՄ և շտապ բեղմնականխում

Աղյուսակ 5.2-ը ցույց է տալիս հակաբեղմնավորման առնվազն մեկ մեթոդի մասին գիտելիքներ ունեցող հարցման պահին ամուսնացած կանանց և տղամարդկանց տոկոսներն

ըստ հիմնական բնութագրիչների: Որևէ մեթոդի և ժամանակակից մեթոդի վերաբերյալ գիտելիքներն շատ չեն տատանվում ըստ հիմնական բնութագրիչների և հիմնականում միանման են, բացառությամբ Արագածոտնի մարզի ամուսնացած կանանց:

5.2 ՀԱԿԱԲԵՂՆԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԵՐԲԵՎԷ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Բոլոր հարցվողներին, ովքեր նշել են որևէ հակաբեղմնավորման մեթոդի իմացության մասին, տրվել է հարց, թե նրանք (կամ իրենց զուգընկերը) երբևէ օգտագործել են այն, թե՛ ոչ: Յուրաքանչյուր նշված մեթոդի օգտագործումը ճշտվել է առանձին հարցով: Հարցաթերթում կար ստուգիչ հարցադրում այն կանանց համար, ովքեր նշել էին, որ չեն օգտագործել հակաբեղմնավորման որևէ մեթոդ: Արդյունքները ներկայացված են աղյուսակ 5.3.1-ում, ինչպես բոլոր, այնպես էլ հարցման պահին ամուսնացած կանանց համար ըստ հնգամյա տարիքային խմբերի:

Ամուսնացած կանանց երեք քառորդն իրենց կյանքի որոշ ժամանակահատվածում օգտագործել են հակաբեղմնավորման մեթոդ: Ի տարբերություն հարցման պահին ամուսնացած կանանց, բոլոր հարցված կանանց շրջանում հակաբեղմնավորման մեթոդների երբևէ օգտագործման մակարդակը նշանակալիորեն ցածր է, քանի որ այն ներառում է կանանց, ովքեր երբևէ չեն ունեցել սեռական հարաբերություն (համապատասխանաբար՝ 76 և 50 տոկոս): Հարցման պահին ամուսնացած կանայք ավելի հաճախ օգտագործել են ավանդական (57 տոկոս), քան՝ ժամանակակից մեթոդ (39 տոկոս): Ամենատարածված մեթոդն ընդհատված սեռական հարաբերությունն է: Ընդհատված սեռական հարաբերության երբևէ օգտագործումն (50 տոկոս) երկուսից ավելի անգամ գերազանցում է պահպանակի (22 տոկոս) կամ ՆԱՄ-ի (18 տոկոս) երբևէ օգտագործումը: Հարկ է նշել, որ չնայած Հայաստանում պետական հատվածի միջոցով կանացի պահպանակ երբեք չի բաշխվել և չի վաճառվել դեղատներում, այնուամենայնիվ, կանանց 1 տոկոսից քիչը նշել է, որ երբևէ օգտագործել է կանացի պահպանակ:

Աղյուսակ 5.3.1 Հակաբեղմնավորման մեթոդի երբևէ օգտագործում, կանայք																		
15-49 տարեկան հարցման պահին ամուսնացած և բոլոր կանանց տոկոսը, ովքեր երբևէ օգտագործել են որևէ հակաբեղմնավորման մեթոդ ըստ հատուկ մեթոդների և տարիքի, Հայաստան 2005																		
Տարիք	Որևէ մեթոդ	Որևէ ժամանակակից մեթոդ	Կնոջ ստերիլացում	ԲՈԼՈՐ ԿԱՆԱՅԵ								Ավանդական մեթոդ						
				Հարբ	ՆԱՄ	Ներարկումներ	Ինսյուլնոններ	Տղամարդու պահպանակ	Կանացի պահպանակ	Ղիաֆրազման	Փրփուր/գել	ԼԱՄ	Շտապ բեղմնակամիում	Որևէ ավանդական մեթոդ	Ութմիլ մեթոդ	Ընդ. սեռ. հարբ	Որևէ ժող. մեթոդ	Կանանց բվաքանակ
ԲՈԼՈՐ ԿԱՆԱՅԵ																		
15-19	1.4	0.4	0.0	0.0	0.2	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0	1.0	0.3	1.0	0.1	1,123
20-24	24.0	11.6	0.0	1.0	5.1	0.0	0.0	6.4	0.1	0.0	0.7	1.7	0.0	16.5	1.8	14.6	1.7	1,131
25-29	60.8	35.8	0.2	4.8	14.1	0.0	0.0	21.2	0.4	0.0	1.5	2.2	1.7	44.1	8.5	40.2	4.5	929
30-34	74.5	43.8	0.0	8.1	19.6	0.1	0.2	25.6	0.0	0.0	2.1	3.4	1.0	56.7	14.9	47.1	9.6	749
35-39	73.8	41.3	0.9	7.6	20.0	0.9	0.0	24.3	0.7	0.0	3.9	2.6	2.0	54.2	12.9	47.8	4.4	711
40-44	75.7	38.2	1.1	5.3	18.9	1.2	0.0	19.9	0.9	0.1	1.7	1.0	1.5	59.1	13.9	52.1	6.7	965
45-49	64.1	26.8	0.6	4.4	13.5	0.5	0.2	12.9	0.4	0.0	1.2	1.9	0.7	51.1	17.8	42.5	5.9	958
Ընդամենը	49.9	26.1	0.4	4.0	12.1	0.4	0.1	14.5	0.3	0.0	1.4	1.7	0.9	37.7	9.3	32.8	4.3	6,566
ՀԱՐԾՄԱՆ ՊԱՋԻՆ ԱՍՈՒՄՆԱՑՄԸ ԿԱՆԱՅԵ																		
15-19	18.8	4.5	0.0	0.0	3.4	0.0	0.0	0.4	0.0	0.0	0.0	0.7	0.0	14.4	4.1	14.4	1.1	78
20-24	53.3	26.0	0.0	2.2	11.5	0.1	0.0	14.2	0.2	0.0	1.6	3.8	0.0	36.7	4.0	32.4	3.8	504
25-29	77.9	45.7	0.2	5.9	18.8	0.0	0.1	26.6	0.5	0.0	2.0	2.9	1.9	56.0	11.0	51.2	5.1	695
30-34	85.7	51.5	0.0	10.1	23.1	0.2	0.2	29.9	0.1	0.0	2.5	4.2	1.3	65.3	16.7	54.3	10.7	601
35-39	79.9	42.9	0.7	7.7	21.1	1.1	0.0	25.6	0.8	0.0	2.6	2.7	1.9	59.5	12.8	53.6	4.6	602
40-44	83.4	41.2	1.3	5.8	20.8	1.3	0.0	21.0	1.0	0.2	1.9	1.1	0.8	65.0	14.5	57.3	7.6	824
45-49	73.7	30.5	0.8	4.0	15.4	0.6	0.3	15.4	0.6	0.0	1.6	2.2	0.9	59.3	21.2	49.3	6.3	741
Ընդամենը	75.5	39.2	0.6	5.9	18.4	0.6	0.1	21.7	0.5	0.0	2.0	2.6	1.1	57.1	13.7	49.8	6.3	4,044
ԼԱՄ - Լակտացիոն ամենաորդայի մեթոդ																		

Աղյուսակ 5.3.2 Հակաբեղմնավորման մեթոդների երբևէ օգտագործում. Տղամարդիկ
 15-49 տարեկան բոլոր, հարցման պահին ամուսնացած և սեռապես ակտիվ չամուսնացած տղամարդկանց տոկոսը, ովքեր երբևէ օգտագործել են որևէ հակաբեղմնավորման մեթոդ ըստ հատուկ մեթոդների և տարիքի, Հայաստան 2005

Տարիք	Ժամանակակից մեթոդ				Ավանդական մեթոդ			
	Որևէ մեթոդ	Որևէ ժամանակակից մեթոդ	Տղամարդու ստերոիդացում	Տղամարդու պահպանակ	Որևէ ավանդական մեթոդ	Ռիթմիկ մեթոդ	Ընդ. սեռ. հարաբ.	Տղամարդկանց թվաքանակ
ԲՈՒՈՐ ՏՂԱՄԱՐԴԻԿ								
15-19	12.7	11.8	0.1	11.7	2.8	0.4	2.8	292
20-24	63.7	60.6	0.0	60.6	30.1	5.5	29.1	237
25-29	79.8	73.9	1.3	73.9	56.7	9.8	56.6	202
30-34	85.5	76.2	0.0	76.2	58.8	13.3	57.2	156
35-39	91.2	75.7	0.0	75.7	75.0	26.1	73.5	150
40-44	88.1	72.0	0.0	72.0	74.4	17.5	72.3	199
45-49	88.1	70.3	0.4	69.9	71.3	20.6	69.0	211
Ընդամենը	67.8	58.8	0.3	58.8	48.2	11.9	47.0	1,447
ՀԱՐՑՄԱՆ ՊԱՀԻՆ ԱՄՈՒՍՆԱԳԱԾ ՏՂԱՄԱՐԴԻԿ								
15-19	18.5	17.0	0.0	17.0	3.8	0.7	3.8	184
20-24	62.9	60.9	0.0	60.9	28.3	5.6	26.8	146
25-29	77.2	71.9	0.0	71.9	59.2	9.6	59.2	120
30-34	81.2	70.9	0.0	70.9	56.8	10.8	55.1	89
35-39	90.0	64.9	0.0	64.9	73.3	31.6	70.2	71
40-44	87.1	72.6	0.0	72.6	72.1	14.8	69.6	126
45-49	84.8	66.5	0.7	65.8	69.2	22.8	67.6	123
Ընդամենը	66.2	56.9	0.1	56.8	46.3	11.6	45.0	861
ՍԵՆՈՎԴԵՆ ԱԿՏԻՎ ԶԱՄՈՒՍՆԱԳԱԾ ՏՂԱՄԱՐԴԻԿ¹								
Ընդամենը	97.9	95.3	0.0	95.3	59.9	12.7	58.3	143

¹ Հարցմանը նախորդող 30 օրերի ընթացքում սեռական հարաբերություն ունեցած տղամարդիկ

ՀԺԱՀ-2005 ընթացքում տղամարդիկ հարցվել են միայն տղամարդկանց վերաբերող հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման վերաբերյալ, հետևաբար այդ տվյալները համեմատական չեն կանանց տվյալների հետ: Հարցման պահին ամուսնացած տղամարդկանց երկու երրորդը և գրեթե բոլոր սեռապես ակտիվ չամուսնացած տղամարդիկ նշել են տղամարդուն վերաբերող որևէ հակաբեղմնավորման մեթոդի երբևէ օգտագործման մասին (Աղյուսակ 5.3.2): Ամենատարածված մեթոդը տղամարդու պահպանակն է: Ամուսնացած տղամարդկանց կեսից ավելին, ինչպես նաև սեռապես ակտիվ չամուսնացած տղամարդկանց 95 տոկոսը նշել է պահպանակի օգտագործման մասին:

5.3 ՀԱԿԱԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈՂԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՐՑՄԱՆ ՊԱՀԻՆ

Աղյուսակ 5.4-ը ցույց է տալիս բոլոր կանանց և հարցման պահին ամուսնացած կանանց կողմից հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումը հարցման պահին: Վերարտադրողական տարիքի բոլոր կանանց գրեթե մեկ երրորդն օգտագործում է հակաբեղմնավորման մեթոդներ: Նշված կանանցից գրեթե բոլորը հարցման պահին ամուսնացած են եղել: Ընդհանուր առմամբ, ՀԺԱՀ արդյունքները վկայում են, որ ամուսնացած կանանց 53 տոկոսը հարցման պահին օգտագործել են հակաբեղմնավորման մեթոդներ:

Աղյուսակ 5.4 Հակաբեղմնավորման մեթոդի օգտագործումը հարցման պահին
 15-49 տարեկան հարցման պահին ամուսնացած և բոլոր կանանց տոկոսային բաշխումն ըստ հարցման պահին հակաբեղմնավորման մեթոդի օգտագործման և տարիքի, Հայաստան 2005

Տարիք	Որևէ մեթոդ	Ժամանակակից մեթոդ							Ավանդական մեթոդ					Ոչ մի մեթոդ հարցման պահին	Ընդամենը	Կանանց թվաքանակ
		Որևէ ժամանակակից մեթոդ	Կնոջ ստերիլացում	Հարբ	ՆԱՍ	Տրամարրու պահպանման	Փրփուր/գել	ԼԱՍ	Որևէ ավանդական մեթոդ	Ռիթմիկ մեթոդ	Ընդ. սեռ. հարբ	Որևէ ժող. մեթոդ				
ԲՈՒՈՐ ԿԱՆԱՅԷ																
15-19	1.1	0.3	0.0	0.0	0.2	0.0	0.0	0.0	0.8	0.0	0.8	0.0	98.9	100.0	1,123	
20-24	19.3	8.3	0.0	0.2	3.9	3.4	0.0	0.8	11.0	0.7	9.3	1.0	80.7	100.0	1,131	
25-29	46.7	21.1	0.2	0.9	8.7	10.3	0.6	0.4	25.6	1.9	22.3	1.4	53.3	100.0	929	
30-34	54.4	22.6	0.0	1.6	11.7	8.8	0.2	0.3	31.8	4.8	24.7	2.3	45.6	100.0	749	
35-39	54.3	19.5	0.9	0.7	9.7	8.3	0.0	0.0	34.8	4.5	29.1	1.2	45.7	100.0	711	
40-44	47.8	15.6	1.1	0.7	7.3	6.5	0.0	0.0	32.2	3.2	26.9	2.1	52.2	100.0	965	
45-49	26.2	5.7	0.6	0.1	3.3	1.6	0.0	0.0	20.5	3.4	15.7	1.5	73.8	100.0	958	
Ընդամենը	33.1	12.3	0.4	0.5	5.9	5.1	0.1	0.2	20.8	2.4	17.1	1.3	66.9	100.0	6,566	
ՀԱՐԾՄԱՆ ՊԱԴԻՆ ԱՍՈՒՆԱՑՄԱՑ ԿԱՆԱՅԷ																
15-19	16.5	4.5	0.0	0.0	3.4	0.4	0.0	0.7	12.0	0.0	12.0	0.0	83.5	100.0	78	
20-24	42.9	18.6	0.0	0.5	8.8	7.6	0.0	1.8	24.3	1.5	20.5	2.3	57.1	100.0	504	
25-29	61.7	27.4	0.2	1.2	11.6	13.0	0.9	0.5	34.3	2.5	29.8	1.9	38.3	100.0	695	
30-34	67.3	27.7	0.0	1.9	14.5	10.6	0.2	0.3	39.6	6.0	30.8	2.7	32.7	100.0	601	
35-39	62.4	21.5	0.7	0.8	10.7	9.4	0.0	0.0	40.8	5.0	34.4	1.4	37.6	100.0	602	
40-44	55.9	18.2	1.3	0.8	8.5	7.6	0.0	0.0	37.7	3.7	31.5	2.5	44.1	100.0	824	
45-49	33.5	7.3	0.8	0.1	4.3	2.1	0.0	0.0	26.2	4.3	20.1	1.9	66.5	100.0	741	
Ընդամենը	53.1	19.5	0.6	0.8	9.4	8.1	0.2	0.4	33.6	3.8	27.7	2.1	46.9	100.0	4,044	


Նշում՝ Եթե օգտագործել է մեկ մեթոդից ավելի, ապա այս աղյուսակում ներառվել է առավել արդյունավետ մեթոդը:
 ԼԱՍ – Լակտացիոն ամենորեայի մեթոդ:

Հարցման պահին ամուսնացած կանանց շրջանում, ավանդական մեթոդների օգտագործման ցուցանիշը կազմել է 34 տոկոս, որն ավելի բարձր է, քան ժամանակակից մեթոդների օգտագործման 20 տոկոս ցուցանիշը (Գծապատկեր 5.1): Ամենատարածված մեթոդն ընդհատված սեռական հարաբերությունն է: Հարցման պահին ամուսնացած կանանց շրջանում ընդհատված սեռական հարաբերության օգտագործումը (28 տոկոս) երեք անգամ գերազանցում է ՆԱՍ–ի (9 տոկոս) կամ պահպանակի (8 տոկոս) հարցման պահին օգտագործմանը:


Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումը տատանվում է 17 տոկոսից՝ 15-19 տարիքային խմբի հարցման պահին ամուսնացած կանանց մոտ, մինչև 67 տոկոս՝ 30-34 տարիքային խմբի հարցման պահին ամուսնացած կանանց շրջանում: Այս տոկոսային բաշխումը օրինաչափ է գրեթե բոլոր մեթոդների համար, բացառությամբ մի քանի մեթոդների: Տղամարդու պահպանակն ավելի շատ օգտագործում են 25-29 տարիքային խմբի կանայք, մինչդեռ կնոջ անլացումն ավելի տարածված է մեծահասակ կանանց շրջանում: Հարկ է նշել, որ կնոջ անլացումը հիմնականում կատարվել է բժշկական ցուցումով և ոչ հակաբեղմնավորման նպատակով:

Ընդհանուր առմամբ, հարցման պահին հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման ՀԺԱՀ-2000-ի արդյունքում ստացված 61 տոկոս ցուցանիշը նվազել է: Արդյունքները վկայում են, որ թե՛ ավանդական, թե՛ ժամանակակից մեթոդների օգտագործումը նվազել է (Գծապատկեր 5.2):

Գծապատկեր 5.1 Հարցման պահին ամուսնացած կանանց շրջանում հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումը հարցման պահին



Գծապատկեր 5.2 Ամուսնացած կանանց շրջանում հարցման պահին հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման միտումներ



Աղյուսակ 5.5 Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման միտումները

15-49 տարեկան հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսային բաշխումն ըստ հակաբեղմնավորման մեթոդի ընթացիկ օգտագործման, Հայաստան 2005

Մեթոդ	ՀԺԱԳ-2000	ՀԺԱԳ-2005
Որևէ մեթոդ	60.5	53.1
Որևէ ժամանակակից մեթոդ	22.3	19.5
Կնոջ ամլացում	2.7	0.6
Հաբեր	1.1	0.8
ՆԱՄ	9.4	9.4
Տղամարդու պահպանակ	6.9	8.1
Փրփուր/գել	0.2	0.2
ԼԱՄ	1.9	0.4
Որևէ ավանդական մեթոդ	38.2	33.6
Ռիթմիկ մեթոդ	4.8	3.8
Ընդհատված սեռ. հարաբ. ժող. մեթոդներ	31.9	27.7
	1.5	2.1
Չի օգտագործում	39.5	46.9
Ընդամենը	100.0	100.0
Հարցման պահին ամուսնացած կանանց թվաքանակ	4,125	4,044

5.4 ՀԱՐՑՄԱՆ ՊԱՅԻՆ ՀԱՎԱԲԵՂՄԱԿՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ

Աղյուսակ 5.6-ը ցույց է տալիս, որ հարցման պահին ամուսնացած կանանց շրջանում հակաբեղմնավորման մեթոդների ընթացիկ օգտագործման ցուցանիշն աննշան տատանվել է ըստ հիմնական բնութագրիչների: Ինչպես ակնկալվում էր, հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումը՝ մասնավորապես ժամանակակից, կրթական մակարդակին զուգահեռ աճում է: Բարձրագույն կրթություն ունեցող կանայք գրեթե 3 անգամ շատ են օգտագործում ժամանակակից մեթոդ, քան հիմնական ընդհանուր կրթություն ունեցող կանայք (համապատասխանաբար՝ 29 և 11 տոկոս): Ընդհանուր առմամբ, կանայք չեն օգտագործում հակաբեղմնավորման որևէ մեթոդ մինչև առաջին երեխայի ծնունդը: Առնվազն մեկ կենդանի երեխա ունեցող կանանց մեծամասնությունն օգտագործում է հակաբեղմնավորման մեթոդ:

Աղյուսակ 5.6 Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումը հարցման պահին ըստ հիմնական բնութագրիչների

Հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսն ըստ հակաբեղմնավորման մեթոդների ընթացիկ օգտագործման և ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005թ.

Հիմնական բնութագրիչներ	Ժամանակակից մեթոդ								Ավանդական մեթոդ						
	Որևէ մեթոդ	Որևէ ժամանակակից մեթոդ	Կնոջ ստերիլացում	Հաբ	ՆԱՍ	Տղամարդու պահպանակ	Փրփուր/կրեմ/գել	ԼԱՄ	Որևէ ավանդական մեթոդ	Ռիթմիկ մեթոդ	Ընդ. սեռ. հարաբ.	Ժող. մեթոդ	Ոչ մի մեթոդ հարցման պահին	Ընդամենը	Կանանց թվաքանակ
Կենդանի երեխաների թվաքանակ															
0	3.6	1.8	0.0	0.0	0.0	1.8	0.0	0.0	1.8	0.0	1.8	0.0	96.4	100.0	265
1-2	57.2	22.7	0.2	0.8	10.5	10.3	0.3	0.5	34.5	4.1	27.8	2.6	42.8	100.0	2,458
3+	55.3	17.1	1.3	1.1	9.4	5.2	0.0	0.2	38.2	4.0	32.7	1.5	44.7	100.0	1,321
Բնակավայր															
Քաղաքային	54.3	21.7	0.7	1.0	9.8	9.8	0.3	0.2	32.6	4.7	25.3	2.6	45.7	100.0	2,447
Գյուղական	51.2	16.1	0.4	0.6	8.9	5.5	0.0	0.7	35.2	2.5	31.4	1.3	48.8	100.0	1,597
Սարգ															
Երևան	58.5	25.4	0.9	1.1	10.5	12.2	0.5	0.1	33.1	5.8	24.4	2.9	41.5	100.0	1,362
Արագածոտն	53.6	23.0	1.5	1.5	11.8	7.3	0.0	0.9	30.6	2.5	26.9	1.2	46.4	100.0	196
Արարատ	41.1	16.6	0.2	0.3	8.8	5.0	0.0	2.3	24.5	3.8	19.5	1.2	58.9	100.0	307
Արմավիր	57.8	12.6	0.0	0.0	7.0	5.6	0.0	0.0	45.2	1.2	41.8	2.2	42.2	100.0	381
Գեղարքունիք	41.0	16.4	0.7	0.9	6.4	7.8	0.0	0.5	24.7	2.9	20.6	1.1	59.0	100.0	303
Լոռի	51.4	22.1	0.0	1.5	14.0	6.7	0.0	0.0	29.3	2.6	25.6	1.1	48.6	100.0	343
Կոտայք	48.9	11.3	0.5	0.7	4.9	4.8	0.0	0.4	37.6	4.0	31.8	1.8	51.1	100.0	357
Շիրակ	41.7	16.3	0.3	0.5	10.7	4.7	0.0	0.0	25.3	1.5	23.2	0.6	58.3	100.0	357
Սյունիք	61.4	16.5	0.9	0.5	11.9	2.4	0.0	0.8	44.9	2.1	38.9	3.9	38.6	100.0	189
Վայոց ձոր	66.9	18.6	0.0	1.2	2.8	14.5	0.0	0.0	48.3	5.0	42.1	1.2	33.1	100.0	65
Տավուշ	62.2	16.8	0.0	0.8	7.5	8.2	0.3	0.0	45.3	4.6	37.5	3.3	37.8	100.0	184
Կրթություն															
Հիմնական ընդհանուր	41.6	11.1	0.0	0.0	7.2	1.5	2.4	0.0	30.5	1.3	28.1	1.1	58.4	100.0	235
Միջնակարգ ընդհանուր	52.3	17.1	0.9	0.4	9.1	6.2	0.0	0.4	35.2	2.3	31.1	1.8	47.7	100.0	1,629
Միջին մասնագիտական	52.5	18.1	0.3	1.5	9.0	7.0	0.0	0.3	34.4	4.6	27.6	2.2	47.5	100.0	1,353
Բարձրագույն	58.8	28.9	0.5	0.8	11.4	15.5	0.1	0.5	30.0	6.1	21.2	2.7	41.2	100.0	828
Բարեկեցության մակարդակ															
Ամենացածր	50.8	12.4	0.3	0.8	6.0	5.0	0.0	0.2	38.4	2.0	35.6	0.7	49.2	100.0	764
Ցածր	48.4	16.0	0.3	0.3	9.6	5.2	0.0	0.6	32.4	2.4	28.7	1.3	51.6	100.0	809
Միջին	51.1	17.4	0.5	0.7	8.5	7.5	0.0	0.2	33.7	3.9	27.7	2.1	48.9	100.0	788
Բարձր	54.7	22.1	0.8	1.0	10.8	9.0	0.0	0.4	32.7	5.7	23.4	3.6	45.3	100.0	841
Ամենաբարձր	59.8	28.6	0.9	1.4	11.8	13.2	0.8	0.5	31.2	4.8	23.9	2.5	40.2	100.0	842
Ընդամենը	53.1	19.5	0.6	0.8	9.4	8.1	0.2	0.4	33.6	3.8	27.7	2.1	46.9	100.0	4,044

Նշում՝ Եթե կինը մեկից ավելի մեթոդ է օգտագործել, ապա այս աղյուսակում ներառվել է առավել արդյունավետ մեթոդը:
 LԱՄ - Լակտացիոն ամենորեայի մեթոդ

Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման զգալի տարբերություն է նկատվել մարզային կտրվածքով: Այսպես, ընդհատված սեռական հարաբերությունն ամենատարածվածն է և բոլոր մարզերում հարցման պահին ամուսնացած կանանց առնվազն 1/5-րդը նշել է մեթոդի օգտագործման մասին: Ընդհատված սեռական հարաբերությունը, որպես հակաբեղմնավորման մեթոդի օգտագործում, հարցման պահին ամենաբարձր տոկոսներն արձանագրվել են Վայոց ձորի և Արմավիրի մարզերի կանանց շրջանում (42 տոկոս): Արարատի մարզում այս ցուցանիշը կազմել է 20 տոկոսից ցածր: Ժամանակակից մեթոդների օգտագործումը տատանվում է ամենաբարձրից՝ 25 տոկոս Երևանում, մինչև ամենացածրը՝ 11 տոկոս Կոտայքում: Վայոց ձորի մարզում գրանցված 3 տոկոս ՆԱՄ-ի օգտագործման ցուցանիշի համեմատությամբ, Երևանի, Արագածոտնի, Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերի հարցման պահին ամուսնացած կանանց առնվազն 10 տոկոսը օգտագործել է այդ մեթոդը: Տղամարդու պահպանակի օգտագործման մասին նշել են Երևանի և Վայոց ձորի հարցման պահին ամուսնացած կանանց համապատասխանաբար՝ 12 և 15 տոկոսը: Սյունիքի մարզում այս ցուցանիշը կազմել է 2 տոկոս: Չնայած ընտրանքային փոփոխականությունը կարող է որոշ տարբերությունների պատճառ հանդիսանալ, այնուամենայնիվ, կնոջ ամլացումը մյուս մարզերի համեմատությամբ գերիշխող է Արագածոտնում և Լոռիում: Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի կանանց կեսից ավելին չի օգտագործում հակաբեղմնավորման որևէ մեթոդ:

5.5 ԵՐԵՎԱՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱԿԱԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴ ՕԳՏԱԳՈՐԾԵԼԻՍ

Ընտանիքի պլանավորման մեթոդների օգտագործման շարժառիթները գնահատելու նպատակով կանանց տրվել են հարցեր պարզելու համար, թե քանի կենդանի երեխա ունենին նրանք, երբ առաջին անգամ օգտագործեցին ընտանիքի պլանավորման որևէ մեթոդ: Ենթադրվում է, որ այն կանայք, ովքեր օգտագործել են որևէ մեթոդ մինչև երեխա ունենալը, հավանաբար, ցանկացել են որոշ ժամանակով հետաձգել երեխայի ծնունդը: Այն կանայք, ովքեր առաջին անգամ կիրառել են որևէ մեթոդ մեկ կամ երկու երեխա ունենալուց հետո, թերևս ցանկացել են կամ հետաձգել հաջորդ երեխայի ծնունդը, կամ սահմանափակել պտղաբերությունը: Մի քանի երեխա ունենալուց հետո, առաջին անգամ որևէ մեթոդ օգտագործած կանայք, ավելի հակված են կիրառել ընտանիքի պլանավորման մեթոդները պտղաբերությունը կասեցնելու, քան երեխայի ծնունդը հետաձգելու նպատակով:

Աղյուսակ 5.7 Կենդանի երեխաների թվաքանակն առաջին անգամ հակաբեղմնավորման մեթոդ օգտագործելիս

15-49 տարեկան կանանց տոկոսային բաշխումն ըստ առաջին անգամ հակաբեղմնավորման մեթոդ օգտագործելիս կենդանի երեխաների թվաքանակի և ըստ հարցման պահին տարիքի, Հայաստան 2005

Տարիքը հարցման պահին	Երբևէ չի օգտագործել	Կենդանի երեխաների թվաքանակն առաջին անգամ հակաբեղմնավորման մեթոդ օգտագործելիս					Ընդամենը	Կանանց թվաքանակ
		0	1	2	3	4+		
15-19	98.6	0.1	1.2	0.1	0.0	0.0	100.0	1,123
20-24	76.0	0.8	16.9	5.4	0.8	0.0	100.0	1,131
25-29	39.2	3.8	28.0	24.4	3.9	0.5	100.0	929
30-34	25.5	1.1	27.9	35.1	9.6	0.8	100.0	749
35-39	26.2	2.3	18.9	35.9	14.1	2.6	100.0	711
40-44	24.3	1.6	20.2	30.9	18.7	4.3	100.0	965
45-49	35.9	1.3	16.9	25.6	15.9	4.4	100.0	958
Ընդամենը	50.1	1.5	17.8	20.6	8.4	1.7	100.0	6,566

Աղյուսակ 5.7-ը ներկայացնում է կանանց տոկոսային բաշխումն ըստ կենդանի երեխաների թվաքանակի առաջին անգամ հակաբեղմնավորման մեթոդ օգտագործելիս և հարցման պահին տարիքի:

Աղյուսակ 5.7-ի տվյալները ցույց են տալիս, որ հակաբեղմնավորման մեթոդի օգտագործումն ավելի տարածված է առնվազն մեկ երեխայի ծնունդից հետո: ՀԺԱՀ-2005-ի ընթացքում կանանց տրվել է հարց, թե քանի երեխա են ունեցել այն ժամանակ, երբ առաջին անգամ օգտագործել են հակաբեղմնավորման մեթոդ: 15-49 տարեկան բոլոր կանանց շրջանում միայն 1.5 տոկոսն է նշել առաջին երեխայի ծնունդից առաջ հակաբեղմնավորման մեթոդի օգտագործման մասին, այնինչ առաջին երեխայի ծնունդից հետո հակաբեղմնավորման մեթոդներ սկսել են օգտագործել կանանց 18, իսկ երկրորդ երեխայի ծնունդից հետո՝ կանանց 21 տոկոսը:

5.6 ՊՏՂԱԲԵՐ ԺԱՄԱՆԱԿԱՅԱՏՎԱԾԻ ՄԱՍԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Վերարտադրողականության ֆիզիոլոգիայի վերաբերյալ հիմնական գիտելիքների առկայությունը հատկապես օգտակար է սեռական կյանքի հետ կապված այնպիսի մեթոդի արդյունավետ օգտագործման համար, ինչպիսին է ռիթմիկ մեթոդը: ՀԺԱՀ 2005-ի ընթացքում բոլոր կանանց տրվել է հարց կնոջ պտղաբերության ժամանակահատվածի մասին նրանց իմացությունը պարզելու նպատակով: Աղյուսակ 5.8-ը ցույց է տալիս, որ կանանց 34 տոկոսը ճիշտ է սահմանել հղիանալու ժամանակահատվածը, այն է՝ դաշտանային երկու ցիկլերի մեջտեղում ընկած ժամանակահատվածը: Կանանց 41 տոկոսը պատասխանել է, որ չգիտի, թե երբ է կնոջ հղիանալու ռիսկի ժամանակահատվածը: Այնուամենայնիվ, պարբերաբար ինքնազսպման (ռիթմիկ) մեթոդն օգտագործող կանանց 76 տոկոսը ճշգրիտ է սահմանել պտղաբերության ժամանակահատվածը: Այս ցուցանիշը գրեթե չի տարբերվում ՀԺԱՀ 2000-ի արդյունքում ստացված ցուցանիշից:

Աղյուսակ 5.8 Պտղաբեր ժամանակահատվածի մասին գիտելիքներ
15-49 տարեկան կանանց տոկոսային բաշխումն ըստ դաշտանային ցիկլի ընթացքում պտղաբեր ժամանակահատվածի իմացության և ըստ հարցման պահին ժամանակավոր ինքնազսպման կամ ռիթմիկ մեթոդի օգտագործման, Հայաստան 2005

Ծեղիության ժամանակահատված	Օգտագործում են		Բոլոր կանայք
	ռիթմիկ մեթոդ	օգտագործում չեն	
Դաշտանային ցիկլից անմիջապես առաջ	3.0	2.4	2.5
Դաշտանային ցիկլի ընթացքում	0.6	0.2	0.2
Անմիջապես դաշտանից հետո	15.8	12.2	12.3
2 դաշտանների մեջտեղում	76.0	33.1	34.1
Չկա հատուկ ժամանակահատված	1.6	9.7	9.5
Չգիտի	2.4	42.0	41.1
Տվյալ չկա	0.6	0.3	0.3
Ընդամենը	100.0	100.0	100.0
Կանանց թվաքանակ	156	6,410	6,566

5.7 ԸՆՏԱՆԻՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքի պլանավորման միջոցների ձեռքբերման աղբյուր

Ժամանակակից հակաբեղմնավորման մեթոդների ձեռքբերման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունն օգտակար է ընտանիքի պլանավորման ծառայությունների մատուցման որակի բարձրացման և կառավարման տեսանկյունից: Հարցման պահին ժամանակակից հակաբեղմնավորման մեթոդներ օգտագործող կանանց տրվել է հարց, թե որտեղից են նրանք ձեռք

Աղյուսակ 5.9 Հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդների ձեռքբերման աղբյուր

15-49 տարեկան հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդներ օգտագործողների տոկոսային բաշխումն ըստ վերջին անգամ մեթոդի ձեռքբերման աղբյուրի և ըստ նշված մեթոդների, Հայաստան 2005

Աղբյուր	Հաբեր	ՆԱՄ	Տղամարդու պահպանակ	Բոլոր ժամանակակից մեթոդներ
Պետական հատված	(9.3)	96.6	4.7	52.8
Հիվանդանոց	(5.7)	20.5	1.4	12.6
Ծննդատուն	(0.0)	45.5	0.0	23.6
Պոլիկլինիկա	(1.9)	16.7	0.4	8.4
Կանանց կոնս. կենտրոն	(1.7)	13.0	1.8	7.2
Այլ պետական	(0.0)	0.9	1.1	0.9
Մասնավոր առողջապահական հատված	(88.6)	1.8	84.7	41.8
Դեղատուն	(88.6)	0.7	83.8	40.9
Այլ մասնավոր	(0.0)	1.0	1.0	0.9
Այլ	(1.2)	1.6	2.5	2.0
Չգիտի	(0.9)	0.0	8.1	3.5
Ընդամենը	(100.0)	100.0	100.0	100.0
Կանանց թվաքանակ	35	387	337	791

Նշում՝ Ընդամենը ներառում է կնոջ ամլացման 25 և փրփուր/զել մեթոդի 8 դեպքերը: Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

բերել մեթոդը վերջին անգամ: Քանի որ տարբեր առողջապահական հաստատությունների, ինչպես նաև պետական և մասնավոր հատվածների աղբյուրների տարբերակումը միշտ չէ, որ

Աղյուսակ 5.10 Հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդների գինը
15-49 տարեկան հարցման պահին հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդ օգտագործողների տոկոսը, ովքեր մեթոդի համար չեն վճարել, չեն իմացել գինը և մեդիան գինը ըստ տվյալ մեթոդի, Հայաստան 2005

Գինը	Հաբեր	Բոլոր ժամանակակից մեթոդներ		
		ՆԱՄ	Տղամարդու պահպանակ	Քույր
Տրվել է անվճար	(4.7)	5.3	4.8	5.0
Գինը չգիտի	(7.7)	10.7	53.9	30.3
Մեդիան գին ¹	(1,498)	7,991	990	4,997
Կանանց թվաքանակ	35	387	337	766

Նշում՝ Աղյուսակը չի ներառում ստերիլացումն ու ԼԱՄ-ը: Ընդամենում ներառված են փոփոխություն/գել օգտագործող 8 կանայք: Գների մասին տեղեկատվությունը հիմնված է հարցման պահին մեթոդ օգտագործողների վերջին անգամ ձեռքբերած մեթոդի գների վրա: Գնում ներառված է նաև խորհրդատվության արժեքը, եթե այդպիսին եղել է: Պահպանակների գինը տրված է 1 տուփի կտրվածքով, իսկ հաբերինը՝ ցիկլի: Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկազմված դեպքերի վրա:
¹Մեդիան գինը հայկական դրամով հիմնված է միայն այն կանանց պատասխանների վրա, ովքեր նշել են գնի մասին:

կարող է հստակ լինել, ձեռքբերման աղբյուրի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է մեկնաբանվի զգուշորեն:

Աղյուսակ 5.9-ը ցույց է տալիս, որ ժամանակակից մեթոդներ օգտագործող կանանց կեսից ավելին մեթոդը ձեռք են բերել պետական հատվածից: Սա, նախևառաջ, պայմանավորված է նրանով, որ պետական հատվածն է աղբյուր հանդիսանում գրեթե բոլոր ՆԱՄ օգտագործողների համար (97 տոկոս), որն էլ հակաբեղմնավորման ամենատարածված ժամանակակից մեթոդն է: Պահպանակ և հաբ օգտագործողների գերակշիռ մասը (համապատասխանաբար՝

84 և 89 տոկոս) նշել են, որ վերջին անգամ հակաբեղմնավորման մեթոդը ձեռք են բերել դեղատնից: Այնուամենայնիվ, պահպանակ օգտագործողների 8 տոկոսը տեղյակ չի եղել ձեռքբերման աղբյուրի մասին, ինչից հետևում է, որ պահպանակը ձեռք է բերել զուգընկերը:


Ժամանակակից հակաբեղմնավորման մեթոդների գին

ՀԺԱՀ 2005-ի նպատակներից էր ժամանակակից հակաբեղմնավորման մեթոդների ձեռքբերման համար կատարվող ծախսերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը: Նկատվում են բավական մեծ գնային տատանումներ կախված հակաբեղմնավորման մեթոդի տեսակից (Աղյուսակ 5.10): ՆԱՄ-ը հանդիսանում է ամենաթանկ մեթոդը: ՆԱՄ օգտագործողների 84 տոկոսը վճարել է և տեղյակ է արժեքի մասին: Նրանց պատասխանների հիման վրա հաշվարկվել է ՆԱՄ-ի մեդիան արժեքը, որը կազմել է 7991 դրամ: Սա նշանակում է, որ ՆԱՄ-ի տեղադրման համար կանանց գրեթե կեսը վճարել են 8000 դրամից ավելի, իսկ մյուս կեսը՝ 8000 դրամից պակաս:

Տղամարդու պահպանակ օգտագործող կանանց կեսից ավելին նշել են, որ տեղյակ չեն գնից, կամ պահպանակը տրամադրվել է անվճար: Հաբ օգտագործողների փոքր թվաքանակը թույլ չի տալիս իրականացնել տվյալների հավաստի վերլուծություն:

Հակաբեղմնավորման մեթոդի ձեռքբերման աղբյուր հասնելու համար օգտագործվող տրանսպորտային միջոց

Որպեսզի ապահովվի ժամանակակից հակաբեղմնավորման մեթոդների մատչելիությունը, անհրաժեշտ է, որ այն ձեռք բերելու նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցը լինի արագ, մատչելի և էժան: Գծապատկեր 5.3-ը ցույց է տալիս, որ հակաբեղմնավորման մեթոդների ձեռքբերման աղբյուր հասնելու ամենատարածված միջոցը հասարակական տրանսպորտն է (36 տոկոս), ինչպիսիք են երթուղային տաքսին, ավտոբուսը/տրոլեյբուսը/տրամվայը: Կանանց 32 տոկոսը ձեռքբերման աղբյուր է հասել ոտքով, 15 տոկոսը նշել է, որ օգտվել է իրենց տնային տնտեսությանը պատկանող ավտոմեքենայից, 5 տոկոսը՝ տաքսի ծառայությունից:



Կանանց մեծամասնությունը (10-ից 8 կին), ովքեր հակաբեղմնավորման մեթոդի ձեռքբերման աղբյուր հասնելու համար օգտվել են տրանսպորտային միջոցից՝ ստիպված են եղել վճարել դրա համար: Մեղիան գինը տատանվում է ըստ մարզերի՝ կազմելով 299 դրամ գյուղաբնակ կանանց և 200 դրամ քաղաքաբնակ կանանց համար (տվյալները ներկայացված չեն):

Ի տարբերություն քաղաքաբնակ կանանց, գյուղաբնակ կանայք ոչմիայն ավելի շատ են վճարում, այլ նաև ավելի շատ ժամանակ են ծախսում ձեռքբերման աղբյուր հասնելու համար: Գյուղաբնակ կանանց միայն 1/3-րդն է բնակվում հակաբեղմնավորման մեթոդի ձեռքբերման աղբյուրից 20 րոպե հեռավորության վրա: Նույն ցուցանիշը քաղաքաբնակ կանանց շրջանում կազմում է 55 տոկոս (Տվյալները ներկայացված չեն): Ընդհանուր առմամբ, ժամանակակից հակաբեղմնավորման մեթոդ օգտագործող կանանց գրեթե կեսին (48 տոկոս) անհրաժեշտ է մինչև 20 րոպե ժամանակ հակաբեղմնավորման մեթոդի ձեռքբերման աղբյուր հասնելու համար, մինչդեռ 71 տոկոսին՝ 30 րոպե (Տվյալները ներկայացված չեն):

5.8 ՀԱԿԱԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԱՂԱՐԵՑՈՒՄԸ 12 ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Աղյուսակ 5.11-ը ցույց է տալիս հակաբեղմնավորման մեթոդների դադարեցման ցուցանիշները: Ընդհանուր առմամբ, հակաբեղմնավորման մեթոդներ օգտագործողների 1/3-րդը դադարեցրել է օգտագործումը 12 ամսվա ընթացքում: Առաջին տարվա ընթացքում դադարեցման ցուցանիշն ամենացածրն է ՆԱՄ օգտագործողների մոտ (7 տոկոս) և ամենաբարձրն է ռիթմիկ մեթոդն օգտագործողների մոտ (41 տոկոս): Պահպանակ և ընդհատված սեռական հարաբերություն օգտագործողների գրեթե 1/3-րդը դադարեցրել են մեթոդի կիրառումն առաջին տարվա ընթացքում:

Աղյուսակ 5.11 Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումը դադարեցնելու ցուցանիշներն առաջին տարվա ընթացքում

Հակաբեղմնավորման մեթոդի օգտագործումից հետո առաջիկա 12 ամիսների ընթացքում օգտագործումը դադարեցնողների տոկոսն ըստ դադարեցման պատճառների և նշված մեթոդների, Հայաստան 2005

Օգտագործումը դադարեցված մեթոդներ	Դադարեցման պատճառ				
	Մեթոդի ձախողում	Հղիության ցանկություն	Մեթոդը փոխելու ցանկություն ¹	Այլ պատճառ	Ընդամենը
ՆԱՄ	0.6	0.6	3.2	2.4	6.9
Տղ. պահպանակ	6.9	7.4	7.7	9.0	31.0
Ռիթմիկ մեթոդ	28.4	2.5	4.8	5.1	40.9
Ընդ. սեռ. հարաբ.	20.9	2.8	2.3	7.2	33.3
Այլ	18.8	4.5	10.9	14.2	48.4
Բոլոր մեթոդներ	15.9	3.7	4.7	7.8	32.1

Նշում՝ Աղյուսակը հիմնված է հարցմանը նախորդող 3-59 ամիսների ընթացքում մեթոդի դադարեցման դեպքերի վրա

¹ Այլ մեթոդի օգտագործում դադարեցման հաջորդ ամսվա ընթացքում կամ նշել են այլ առավել արդյունավետ մեթոդի ընտրության ցանկության մասին և սկսել են դրա օգտագործումն առաջիկա 2 ամիսների ընթացքում:

Աղյուսակ 5.12-ը ցույց է տալիս հակաբեղմնավորման մեթոդների դադարեցման բոլոր պատճառները հարցմանը նախորդող հինգ տարիների ընթացքում: Դադարեցումների 43 տոկոսի պատճառ է հաղիսացել մեթոդի անարդյունավետությունը՝ այսինքն պատահական հղիությունը (հղիացել են օգտագործելով հակաբեղմնավորման մեթոդ): Ռիթմիկ մեթոդի, ընդհատված սեռական հարաբերության և այլ ավանդական մեթոդների ցածր արդյունավետությունը հիմնավորվում է մեթոդի անհուսալիության բարձր աստիճանով:

Ինչպես արդեն նշվել է, ընդհատված սեռական հարաբերությունն ամենատարածված հակաբեղմնավորման մեթոդն է: Այն օգտագործվել է հարցման պահին ամուսնացած 28 տոկոս կանանց կողմից, ինչը կազմում է բոլոր հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման կեսը: Այսպիսով, աղյուսակ 5.11-ը ցույց է տալիս, որ հակաբեղմնավորման մեթոդ օգտագործողների 21 տոկոսը դադարել է այդ մեթոդի օգտագործումն անարդյունավետության՝ պատահական հղիության, պատճառով: 51 տոկոս կանանց համար մեթոդի անարդյունավետության՝ պատահական հղիության, պատճառ է հանդիսացել ընդհատված սեռական հարաբերությունը (Աղյուսակ 5.12): Ջարմանալի է, որ մեթոդի ձախողումն ավելի հաճախ հանդիպում է այն կանանց մոտ, ովքեր օգտագործում են ամենատարածված մեթոդը: Այլ կերպ ասած՝ Հայաստանի կանանց զգալի մասին, ովքեր փորձում են՝ կիրառելով ընդհատված սեռական հարաբերությունը վերահսկել իրենց պտղաբերությունը, չի հաջողվում դա անել:

61 տոկոս կանանց համար ձախողված է համարվել ռիթմիկ մեթոդը: Մեթոդի ձախողման պատճառով օգտագործման դադարեցում է արձանագրվել նաև հաբերի և պահպանակի դեպքում (համապատասխանաբար՝ 25 և 29 տոկոս): ՆԱՄ-ի օգտագործումը դադարեցնողների գրեթե կեսը, որպես դադարեցման պատճառ նշել է առողջության վերաբերյալ մտահոգությունը: Չնայած, որ դադարեցման ամենատարածված պատճառը մեթոդի անարդյունավետությունն է, այնուամենայնիվ, հարցվողների 15 տոկոսն որպես պատճառ նշել է սակավաթիվ սեռական հարաբերությունները կամ զուգընկերոջ բացակայությունը, և 14 տոկոսը՝ հղիանալու ցանկությունը:

Աղյուսակ 5.12 Հակաբեղմնավորման մեթոդի օգտագործման ընդհատման պատճառներ

Հարցմանը նախորդող հինգ տարիների ընթացքում 15-49 տարեկան կանանց կողմից հակաբեղմնավորման բոլոր մեթոդների դադարեցումների տոկոսային բաշխումն ըստ նշված հիմնական պատճառի և առանձին մեթոդների, Հայաստան 2005

Օգտագործման ընդհատման պատճառներ	Ժամանակակից մեթոդների ընդհատում				Ավանդական մեթոդների ընդհատում			
	Հաբեր	ՆԱՄ	Տղամարդու պահպանակ	Այլ	Ռիթմիկ մեթոդ	Ընդհատված սեռական հարաբ.	Այլ ժող. մեթոդներ	Այլ մեթոդներ
Հղիացել է օգտագործելով հակաբեղմնավորման մեթոդ	24.8	4.1	28.5	(30.0)	60.8	51.2	54.3	42.5
Ցանկացել է հղիանալ	12.9	15.1	20.3	(5.1)	10.3	13.2	8.4	13.8
Անուսինը հավանություն չի տվել	1.8	0.7	9.1	(3.3)	2.7	3.4	0.0	3.8
Կողմնակի հետևանքներ	6.9	17.7	0.2	(0.0)	0.0	0.1	0.0	1.9
Մտավախություն առողջության վերաբերյալ	16.2	49.3	1.1	(0.0)	0.0	1.2	0.3	5.7
Մատչելի չէ/Չեռու է	0.0	0.0	0.4	(3.0)	0.0	0.0	0.0	0.2
Ցանկացել է ավելի արդյունավետ մեթոդ	3.4	0.6	8.5	(20.9)	3.8	4.5	9.9	5.5
Հարմար չէ օգտագործել	8.1	1.2	4.5	(7.5)	1.3	0.8	4.0	2.2
Սակավաթիվ սեռ. հարաբ./Անուսնու բացակայություն	16.9	2.6	13.5	(12.8)	13.6	18.5	11.9	15.3
Թանկ արժե	3.6	0.0	5.4	(0.0)	0.0	0.2	0.0	1.2
Ճակատագրական	0.0	0.0	0.0	(0.0)	3.3	0.1	0.0	0.3
Դժվար է հղիանալ/Մեղմնաբերություն	1.8	1.1	1.9	(0.0)	2.6	2.2	0.8	1.9
Անուսնական անհաջողություն/Բաժանություն	1.1	2.0	1.3	(0.0)	0.0	0.8	0.0	0.9
Այլ	0.4	5.8	2.3	(10.7)	1.5	1.5	3.0	2.3
Տվյալ չկա	2.1	0.0	3.0	(6.7)	0.0	2.2	7.5	2.5
Ընդամենը	100.0	100.0	100.0	(100.0)	100.0	100.0	100.0	100.0
Դադարեցումների թիվ	90	172	350	55	157	1,080	130	2,034

Նշում՝ Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Աղյուսակը հիմնված է 3-39 ամիս առաջ հակաբեղմնավորման մեթոդի դադարեցման դեպքերի վրա:

5.9 ԱՎԱՆՂԱԿԱՆ ՄԵԹՈՂ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՊԱՏՃԱՈՒՆԵՐ

Իմանալով ավանդական մեթոդների անվստահելիության մասին, ինչու՞ են Հայաստանի կանայք այդքան հաճախ նախընտրում ավանդական մեթոդները ժամանակակից մեթոդներից: Աղյուսակ 5.13-ում ներկայացված են ավանդական մեթոդ օգտագործողների կողմից նշված բոլոր այն պատճառները, որոնք ազդել են ժամանակակից մեթոդ չընտրելու նրանց որոշման վրա: Ամենատարածված պատճառը, որը նշվել է կանանց 59 տոկոսի կողմից, ամուսնու կամ զուգընկերոջ ավանդական մեթոդի ընտրությունն է: Այնուամենայնիվ, ժամանակակից մեթոդներ չընտրելու իրենց որոշումը կանանց գրեթե կեսը (47 տոկոս) մեկնաբանում են որպես ժամանակակից մեթոդների կողմնակի ազդեցության նկատմամբ վախ կամ ունեցած անհաջող փորձ, կանանց 37 տոկոսի համար որոշիչ է ժամանակակից մեթոդների ձեռքբերման գինը: Ավելին, կանանց մի մասը նշում է ժամանակակից մեթոդների վերաբերյալ թերի իմացության (20 տոկոս) կամ մեթոդների դժվարանատչելիության (26 տոկոս) մասին: Ակնհայտ է, որ Հայաստանի կանայք ստիպված են հաղթահարել որոշակի դժվարություններ, կապված հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդի և՛ գնի, և՛ տեղեկատվության ստացման, և՛ ձեռքբերման հետ, որպեսզի օգտագործեն այն:

Աղյուսակ 5.13 Ավանդական մեթոդների օգտագործման պատճառներ

Հակաբեղմնավորման ավանդական մեթոդ օգտագործող կանանց տոկոսը, ովքեր նշել են ավանդական մեթոդ օգտագործելու իրենց ընտրության վրա ազդող հատուկ պատճառներ ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Ժամանակակից մեթոդների հայթհայթման դժվարություն	Ժամանակակից մեթոդների գին	Ժամանակակից մեթոդների մասին իմացության պակաս	Կողմնակի ազդեցությունների կամ փորձ	Անուսնու/զուգընկերոջ ընտրություն	Կրոնական արգելքներ	Բժշկի խորհուրդ	Այլ անձի խորհուրդ	Կանանց թվաքանակ
Տարիք									
15-19	*	*	*	*	*	*	*	*	10
20-24	27.0	41.2	15.5	49.2	56.2	1.4	6.1	15.6	133
25-29	22.8	32.9	21.4	45.8	60.2	0.6	9.3	12.0	242
30-34	25.4	35.6	14.9	50.7	54.3	0.8	8.8	12.6	240
35-39	26.8	38.0	19.0	43.7	58.7	2.5	3.1	9.7	247
40-44	30.2	37.0	24.5	50.7	58.0	1.1	5.5	11.4	311
45-49	21.7	38.8	21.2	40.9	65.7	1.3	6.5	11.4	197
Բնակավայր									
Քաղաքային	20.8	33.4	20.5	50.8	57.3	1.7	6.2	11.5	807
Գյուղական	33.3	42.0	19.5	41.7	61.0	0.6	6.8	12.0	573
Մարզ									
Երևան	18.5	33.0	23.4	52.8	55.3	1.8	7.8	8.6	456
Արագածոտն	60.1	56.9	35.6	55.9	62.7	2.3	19.9	20.8	62
Արարատ	31.8	37.0	6.8	46.0	86.1	0.3	8.6	13.4	82
Արմավիր	36.8	45.9	12.1	72.1	60.8	1.1	3.1	12.6	172
Գեղարքունիք	11.5	21.1	5.0	13.4	44.4	1.9	2.6	3.3	76
Լոռի	19.0	27.3	2.8	6.6	62.6	0.0	7.6	6.6	101
Կոտայք	23.4	25.8	22.8	38.1	45.3	2.9	6.0	13.6	138
Շիրակ	23.0	29.7	17.8	29.5	71.5	0.0	2.0	1.0	91
Սյունիք	62.0	75.5	52.3	81.9	64.6	0.0	6.5	33.6	87
Վայոց ձոր	14.4	54.7	0.6	8.7	62.4	0.0	2.4	24.4	31
Տավուշ	9.6	31.3	26.4	49.7	54.6	0.0	2.9	13.3	83
Կրթություն									
Հիմնական ընդհանուր	43.8	55.6	30.1	51.2	40.3	0.0	4.6	18.9	72
Միջնակարգ ընդհանուր	28.1	41.2	23.3	44.0	60.0	1.1	6.0	12.3	580
Միջին մասնագիտական	27.1	35.4	17.7	45.1	63.7	0.9	6.9	10.9	471
Բարձրագույն	14.2	25.1	14.4	56.3	52.5	2.5	7.2	9.8	256
Բարեկեցության մակարդակ									
Ամենացածր	39.0	49.5	21.4	42.6	56.2	1.2	5.6	13.9	295
Ցածր	30.4	43.1	21.8	48.3	63.0	0.6	7.5	9.7	267
Միջին	30.0	36.7	19.1	36.5	56.8	2.3	5.1	11.0	268
Բարձր	15.3	30.9	18.0	51.9	60.5	1.3	5.8	10.4	280
Ամենաբարձր	14.5	23.9	20.0	56.0	57.9	0.8	8.4	13.5	270
Ընդամենը	26.0	37.0	20.1	47.0	58.8	1.2	6.5	11.7	1,380

Նշում՝ Աստղանիշը ցույց է տալիս, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա և սեղմվել են:

5.10 ԸՆՏԱՆԻՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԶՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Հակաբեղմնավորման մեթոդների կարիքներն ու օգտագործումը կանանց մոտ փոփոխվում է ըստ նրանց վերարտադրողական տարիքի: Հարցման պահին հակաբեղմնավորման մեթոդ չօգտագործող ամուսնացած կանանց հարցվել է, թե արդյոք նրանք մտադիր են ապագայում օգտագործել ընտանիքի պլանավորման մեթոդներ: Արդյունքները ներկայացված են աղյուսակ 5.14-ում:

Աղյուսակ 5.14 Հակաբեղմնավորման մեթոդների ապագա օգտագործում
Հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր չեն օգտագործում հակաբեղմնավորման մեթոդ ըստ ապագայում այն օգտագործելու իրենց մտադրության, համաձայն կենդանի երեխաների թվաքանակի, Հայաստան 2005

Մտադրություն	Կենդանի երեխաների թվաքանակ ¹					Ընդամենը
	0	1	2	3	4+	
Մտադիր է օգտագործել	28.0	43.9	27.9	22.1	16.6	28.7
Վստահ չէ	43.4	29.8	18.4	14.0	11.3	20.9
Մտադիր չէ օգտագործել	28.6	26.0	52.6	62.1	72.1	49.4
Տվյալ չկա	0.0	0.4	1.1	1.9	0.0	1.0
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Կանանց թվաքանակ	149	362	779	465	142	1,898

¹Ներառված են նաև հարցման պահին հղի կանայք

Հարցման պահին ամուսնացած հակաբեղմնավորման մեթոդներ չօգտագործող կանանց 29 տոկոսը նշել է, որ մտադիր է ապագայում օգտագործել որևէ մեթոդ, ի տարբերություն ՀԺԱՀ-2000-ի 36 տոկոս կանանց: Մեկ երեխա ունեցող կանանցից 44 տոկոսը նշել է, որ մտադիր է ապագայում օգտագործել հակաբեղմնավորման մեթոդներ: Այս կանայք շատ ավելի են հակված նշելու, որ հետագայում կօգտագործեն հակաբեղմնավորման մեթոդներ, քան երեխա չունեցող կանանց: Դեռ ավելին, երկու և ավելի երեխա ունեցող կանայք նշել են, որ նրանք չեն պատրաստվում ապագայում օգտագործել հակաբեղմնավորման որևէ մեթոդ:

Ընտանիքի պլանավորման մեթոդների չօգտագործման պատճառների բացահայտումը շատ կարևոր է ծառայությունների որակի բարելավմանն ուղղված ծրագրերի մշակման համար: Աղյուսակ 5.15-ը ներկայացնում է հարցման պահին ամուսնացած, հակաբեղմնավորման մեթոդներ չօգտագործող կանանց կողմից նշված ապագայում ընտանիքի պլանավորման մեթոդների չօգտագործման հիմնական պատճառները:

Կանանց 2/3-րդը նշել է հակաբեղմնավորման մեթոդներ ապագայում չօգտագործելու պտղաբերության հետ կապված որևէ պատճառ (65.4 տոկոս): Մասնավորապես, նրանց 36 տոկոսը նշել է, որ ունի առաջնային² կամ երկրորդային անպտղություն:

Աղյուսակ 5.15 Հակաբեղմնավորման մեթոդ չօգտագործելու մտադրության պատճառներ
Հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսային բաշխումը, ովքեր չեն օգտագործում և չեն պատրաստվում ապագայում օգտագործել հակաբեղմնավորման մեթոդներ ըստ այդ դիրքորոշման հիմնական պատճառի, Հայաստան 2005

Պատճառ	Ընդամենը
Պտղաբերության հետ կապված պատճառներ	65.4
Սակավաթիվ սեռական հարաբերություններ կամ ամուսնու բացակայություն	10.3
Դաշտանադադար/Հիստերեկտոմիա	17.9
Վնասնային/երկրորդային անպտղություն	35.7
Ցանկանում է ունենալ շատ երեխաներ	1.5
Դեմ է օգտագործմանը	16.8
Հարցվողը դեմ է	15.0
Անուսինը/զուգընկերը դեմ է	1.4
Կրոնական արգելքներ	0.4
Գիտելիքի պակաս	0.8
Ոչ մի մեթոդ չգիտի	0.7
Ոչ մի աղբյուր չգիտի	0.2
Մեթոդի հետ կապված պատճառներ	13.9
Մտավախություն առողջության վերաբ.	4.3
Վախ կողմնակի հետևանքներից	1.2
Թանկ է	0.4
Օգտագործումը հարմար չէ	0.2
Օրգանիզմի նորմալ կենսագործունեության խախտում	7.7
Այլ	1.9
Չգիտի	1.0
Ընդամենը	100.0
Կանանց թվաքանակ	938

² Չնայած որ հակաբեղմնավորման մեթոդներ ապագայում չօգտագործելու պտղաբերության հետ կապված որևէ պատճառ «առաջնային/երկրորդային» անպտղությունը նշած կանայք կազմել են 36 տոկոս, սակայն ընդհանուր ընտրանքում այդ կանանց տոկոսը եղել է փոքր: Կանայք, ովքեր արձանագրել են իրենց մոտ առկա առաջնային անպտղություն, չկշռված ընտրանքում կազմել են 4.2 տոկոս (279 կին), իսկ կշռված ընտրանքում՝ 3.9 տոկոս (257 կին):

Աղյուսակ 5.16 Նախընտրելի հակաբեղմնավորման մեթոդ ապագա օգտագործման համար	
Հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսային բաշխումը, ովքեր չեն օգտագործում, սակայն ապագայում ցանկանում են օգտագործել հակաբեղմնավորման մեթոդներ ըստ նախընտրած մեթոդի, Հայաստան 2005	
Նախընտրելի մեթոդ	Ընդամենը
Ժամանակակից	
Հարեր	7.4
ՆԱՄ	31.0
Ներարկումներ	0.2
Իմպլանտներ	0.1
Տղ. պահպանակ	21.4
Կանացի պահպանակ	1.0
Փրփուր/գել	1.2
Ավանդական	
Ռիթմիկ մեթոդ	3.0
Ընդ. սեռ. հարաբ.	23.7
Այլ	1.8
Չի որոշել մեթոդը	9.3
Ընդամենը	100.0
Կանանց թվաքանակ	544

Առավել ուշագրավ է այն փաստը, որ կանանց 15 տոկոսը նշել է, որ նրանք դեմ են հակաբեղմնավորման մեթոդների օգտագործմանը, իսկ 14 տոկոսը նշել են մեթոդի հետ կապված պատճառներ, ինչպիսին, օրինակ, առողջության հետ կապված մտահոգությունն է:

Ընտանիքի պլանավորման մեթոդների ապագա պահանջարկի վերաբերյալ տեղեկություններ կարելի է ստանալ ներկայումս մեթոդ չօգտագործող, բայց հետագայում օգտագործել ցանկացող կանանց հարցնելով, թե նրանք ինչ մեթոդ կնախընտրեն օգտագործել ապագայում: Աղյուսակ 5.16-ը ցույց է տալիս, թե ինչ մեթոդ են նախընտրում հարցման պահին ամուսնացած, բայց հակաբեղմնավորման մեթոդ չօգտագործող կանայք, ովքեր նշել են, որ մտադիր են այն օգտագործել ապագայում: Նրանց կողմից նշված ամենատարածված մեթոդներն են ՆԱՄ-ը (31 տոկոս), ընդհատված սեռական հարաբերությունները (24 տոկոս) և պահպանակը (21 տոկոս): Կանանց միայն 7 տոկոսն է նշել հաբերը, որպես ապագայում նախընտրելի հակաբեղմնավորման մեթոդ:

5.11 ԶԱՆԳԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ (ԶԼՄ) ԸՆՏԱՆԻՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Զանգվածային լրատվամիջոցները հնարավորություն են ընձեռում ընտանիքի պլանավորման վերաբերյալ տեղեկատվություն հաղորդել բնակչության լայն զանգվածներին: Լրատվամիջոցների նման ազդեցության մակարդակի վերաբերյալ տեղեկատվությունն ամհրաժեշտ է ծրագրեր պլանավորողներին և իրականացնողներին, առավել արդյունավետ բացահայտելու, բնակչության ենթախմբերը՝ տեղեկատվական, կրթական ու հաղորդակցական աշխատանքներ իրականացնելու համար: Աղյուսակ 5.17.1-ը ցույց է տալիս, որ կանանց կեսից ավելին հարցմանը նախորդող մի քանի ամիսների ընթացքում ստացել են ընտանիքի պլանավորման վերաբերյալ տեղեկատվություն զանգվածային լրատվամիջոցներով:

Հեռուստատեսությունն ընտանիքի պլանավորման վերաբերյալ տեղեկատվության ստացման ամենատարածված աղբյուրն է՝ հարցված կանանց 48 տոկոսն ընտանիքի պլանավորման վերաբերյալ տեղեկատվությունը ստացել է հեռուստատեսությունից: Տեղեկատվության ստացման տարածված աղբյուր են հանդիսանում հասարակությունը և թերթերը կամ ամսագրերը (համապատասխանաբար՝ 29 և 23 տոկոս): Կանայք ավելի քիչ են նշել, որպես տեղեկատվության ստացման աղբյուր՝ ռադիոն և տպագրված նյութերը, ինչպիսիք են բուկլետները կամ պաստառները, այնուամենայնիվ, հետազոտությանը նախորդող մի քանի ամիսների ընթացքում կանանց 16 տոկոսը տեղեկատվություն է ստացել ռադիոյով և 12 տոկոսը՝ բուկլետով կամ այլ տպագրական նյութերով:

Առկա է զգալի կախվածություն ընտանիքի պլանավորման վերաբերյալ տեղեկատվության հանդեպ անտարբեր կանանց և նրանց բնակավայրի, կրթական մակարդակի, տնային տնտեսության բարեկեցության մակարդակի միջև: Գյուղաբնակ, ցածր կրթական մակարդակ ունեցող և աղքատ տնային տնտեսությունների կանայք ավելի քիչ են

հետաքրքրվել ընտանիքի պլանավորման վերաբերյալ, քան քաղաքաբնակ, բարձր կրթական մակարդակ ունեցող և ապահովված տնային տնտեսությունների կանայք:

Աղյուսակ 5.17.1 Ընտանիքի պլանավորման վերաբերյալ տեղեկատվության մատչելիություն, Կանայք							
15-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր հարցմանը նախորդող մի քանի ամիսների ընթացքում լսել են ընտանիքի պլանավորման մասին հաղորդագրություններ ըստ նշված լրատվամիջոցների և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005							
Հիմնական բնութագրիչներ	Ընտանիքի պլանավորման վերաբերյալ տեղեկատվության մատչելիություն՝					Նշված աղբյուրներից ոչ մեկը	Կանանց թվաքանակ
	Ռադիո	Հեռուստացույց	Թերթ/ամսագիր	Բուկլետ/ պաստառ/ թռուցիկ/ բրոշյուր	Հասարակություն		
Տարիք							
15-19	9.2	33.6	16.9	7.1	21.3	57.0	1,123
20-24	20.1	52.4	23.6	13.0	29.0	40.0	1,131
25-29	16.6	56.0	26.5	15.3	34.5	36.2	929
30-34	22.4	55.6	26.2	15.9	34.3	38.3	749
35-39	17.5	52.1	24.5	11.6	32.2	40.3	711
40-44	15.5	50.4	24.6	11.9	30.8	42.9	965
45-49	14.9	42.1	21.2	10.4	26.5	50.7	958
Բնակավայր							
Քաղաքային	20.8	53.1	26.7	14.7	32.7	39.3	4,194
Գյուղական	8.3	39.8	16.7	7.1	23.4	52.9	2,372
Մարզ							
Երևան	27.2	55.1	25.0	14.2	33.1	37.7	2,468
Արագածոտն	17.6	37.8	16.7	7.8	18.4	53.5	292
Արարատ	0.2	32.3	3.2	0.6	2.1	66.3	462
Արմավիր	10.1	50.3	30.8	9.9	22.1	45.1	567
Գեղարքունիք	0.4	26.7	11.1	7.8	10.1	70.2	443
Լոռի	18.0	57.3	36.7	15.7	39.1	33.9	537
Կոտայք	17.8	44.1	26.9	19.2	44.5	42.3	563
Շիրակ	2.4	34.7	14.8	6.2	16.7	58.2	563
Սյունիք	18.7	77.2	39.7	17.6	62.8	15.1	281
Վայոց ձոր	18.0	42.1	18.9	6.2	2.1	49.7	107
Տավուշ	1.8	46.9	16.9	12.2	49.4	35.1	285
Կրթություն							
Հիմնական ընդհանուր	7.0	26.7	8.1	4.3	18.6	68.0	529
Միջնակարգ ընդհանուր	10.0	40.3	15.2	5.3	24.8	51.6	2,440
Միջին մասնագիտական	15.9	53.2	23.8	12.6	30.8	39.6	1,997
Բարձրագույն	29.6	61.3	39.1	23.9	37.8	30.7	1,600
Բարեկեցության մակարդակ							
Ամենացածր	5.6	31.5	12.3	4.5	19.6	60.9	1,164
Ցածր	6.9	43.3	16.4	6.5	22.0	50.3	1,284
Միջին	10.1	45.2	20.5	10.2	27.2	46.0	1,303
Բարձր	20.4	54.3	28.8	15.6	34.6	37.2	1,375
Ամենաբարձր	35.1	63.2	34.6	21.0	40.4	30.2	1,440
Ընդամենը	16.3	48.2	23.1	12.0	29.3	44.2	6,566

Ավելի քիչ թվով տղամարդիկ են նշել, որ հետազոտությանը նախորդող մի քանի ամիսների ընթացքում ստացել են ընտանիքի պլանավորման վերաբերյալ տեղեկություններ (Աղյուսակ 5.17.2): Ընդհանուր առմամբ, անգամ տեղեկատվության նշված աղբյուրներից որևէ մեկով տղամարդկանց 3/4-րդը չի լսել ընտանիքի պլանավորման մասին: Բնութագրիչներն ըստ բարեկեցության մակարդակի և բնակավայրերի տղամարդկանց շրջանում այնքան տարբեր չեն, որքան կանանց մոտ: Սակայն նկատելի է ուղիղ համեմատական կապ կրթական

մակարդակի հետ: Տղամարդկանց շրջանում ամենատարածված տեղեկատվության աղբյուրը հեռուստատեսությունն է (16 տոկոս):

Աղյուսակ 5.17.2 Ընտանիքի պլանավորման վերաբերյալ տեղեկատվության մատչելիություն, Տղամարդիկ							
15-49 տարեկան տղամարդկանց տոկոսը, ովքեր հարցմանը նախորդող մի քանի ամիսների ընթացքում լսել են ընտանիքի պլանավորման մասին հաղորդագրություններ ըստ նշված լրատվամիջոցների և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005							
Հիմնական բնութագրիչներ	Ընտանիքի պլանավորման վերաբերյալ տեղեկատվության մատչելիություն՝					Նշված աղբյուրներից ոչ մեկը	Տղամարդկանց թվաքանակ
	Ռադիո	Հեռուստացույց	Թերթ/ամսագիր	Բուկլետ/պաստառ/թռուցիկ/բրոշյուր	Հասարակություն		
Տարիք							
15-19	1.8	7.7	5.2	2.6	7.5	87.1	292
20-24	1.9	11.0	5.5	2.8	11.5	78.5	237
25-29	4.2	16.1	6.5	4.9	7.3	78.3	202
30-34	8.9	22.0	8.9	3.5	11.5	68.1	156
35-39	8.7	23.5	6.9	2.3	8.5	70.0	150
40-44	7.7	21.3	14.0	6.4	14.7	68.4	199
45-49	8.0	15.9	8.5	5.4	10.3	76.7	211
Բնակավայր							
Քաղաքային	5.6	16.3	7.6	4.5	7.5	77.0	913
Գյուղական	4.9	14.6	7.8	3.0	14.3	75.8	534
Մարզ							
Երևան	6.9	17.3	6.9	3.1	6.6	77.1	547
Արագածոտն	19.3	22.3	11.4	4.7	7.4	71.1	71
Արարատ	2.1	3.1	2.2	0.3	20.8	76.4	110
Արմավիր	6.0	9.2	4.1	3.4	4.4	87.6	139
Գեղարքունիք	2.1	15.7	11.9	0.8	10.8	74.2	81
Լոռի	6.4	17.5	13.8	22.5	24.8	55.2	87
Կոտայք	2.7	15.5	6.5	0.0	10.4	80.6	151
Շիրակ	0.0	7.4	4.0	3.3	2.2	88.9	98
Սյունիք	1.5	10.3	2.2	2.2	1.5	88.3	67
Վայոց ձոր	(3.2)	(6.5)	(3.2)	(2.5)	(3.2)	(93.5)	31
Տավուշ	2.7	50.7	29.4	8.8	38.5	36.7	64
Կրթություն							
Հիմնական ընդհանուր	0.4	4.0	2.6	3.6	4.5	90.5	205
Միջնակարգ ընդհանուր	3.1	9.1	3.8	2.0	7.9	84.2	586
Միջին մասնագիտական	5.5	18.2	8.5	3.5	10.9	73.7	310
Բարձրագույն	12.0	31.3	16.4	8.0	16.2	58.0	346
Բարեկեցության մակարդակ							
Ամենացածր	3.9	11.4	6.1	1.1	8.5	81.7	261
Ցածր	3.8	11.0	5.5	3.3	10.8	82.6	264
Միջին	2.9	15.6	7.0	4.6	10.5	75.1	326
Բարձր	4.9	17.1	8.6	6.5	7.8	76.1	316
Ամենաբարձր	11.6	22.6	11.0	3.5	12.8	68.2	280
Ընդամենը	5.4	15.7	7.7	3.9	10.1	76.5	1,447
Նշում՝ Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:							

5.12 ԿԱՊՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԶՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Աղյուսակ 5.18-ը ցույց է տալիս հակաբեղմնավորման մեթոդներ չօգտագործող կանանց տոկոսային բաշխումն ըստ ընտանիքի պլանավորման մեթոդներ տրամադրողի հետ կապի: Հակաբեղմնավորման մեթոդներ չօգտագործող կանանց գերակշիռ մասը հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում բուժաշխատողի հետ չի ունեցել զրույց ընտանիքի պլանավորման թեմայով: Հակաբեղմնավորման մեթոդ չօգտագործող շատ քիչ թվով կանայք են բուժհաստատությունում կամ այլ վայրում զրուցել բուժաշխատողի հետ ընտանիքի պլանավորման մասին (համապատասխանաբար՝ 4 և 5 տոկոս): Զօգտագործողների գրեթե 1/4-րդ մասն այցելել է բուժհաստատություն, սակայն այնտեղ չի զրուցել ընտանիքի պլանավորման վերաբերյալ:

Աղյուսակ 5.18 Հակաբեղմնավորման մեթոդ չօգտագործողների կապն ընտանիքի պլանավորման աշխատակիցների հետ

Հակաբեղմնավորման մեթոդ չօգտագործող 15-49 տարեկան կանանց շրջանում վերջին 12 ամիսների ընթացքում ընտանիքի պլանավորման աշխատակիցի հետ զրույց ունեցած, բուժհաստատություն այցելած և այնտեղ ընտանիքի պլանավորման մասին զրույց ունեցած, բուժհաստատություն այցելած, սակայն այնտեղ ընտանիքի պլանավորման մասին զրույց չունեցած, ինչպես նաև ո՛չ ընտանիքի պլանավորման աշխատակիցի, ո՛չ էլ բուժհաստատությունում այդ թեմայով զրույց չունեցած կանանց տոկոսներն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Կանանց տոկոսը, ում այցելել է ընտանիքի պլանավորման աշխատակից	Վերջին 12 ամիսների ընթացքում բուժհաստատություն այցելած կանանց շրջանում		Կանանց տոկոսը, ովքեր չեն քննարկել ընտանիքի պլանավորումը ո՛չ նրանց աշխատակցի, ո՛չ էլ բուժհաստատությունում	Կանանց թվաքանակ
		Ընտանիքի պլանավորման մասին զրույց ունեցած կանանց տոկոս	Ընտանիքի պլանավորման մասին զրույց չունեցած կանանց տոկոս		
Տարիք					
15-19	1.9	1.0	13.9	97.8	1,110
20-24	5.9	5.7	23.6	92.2	913
25-29	9.9	7.7	36.7	88.3	495
30-34	4.8	4.9	35.1	92.4	342
35-39	3.9	5.8	24.2	92.9	325
40-44	4.7	2.6	28.4	94.1	503
45-49	2.7	0.9	28.5	96.9	707
Բնակավայր					
Քաղաքային	4.6	3.2	28.3	94.6	2,842
Գյուղական	4.2	4.3	18.7	93.6	1,553
Մարզ					
Երևան	4.0	2.3	33.2	95.4	1,652
Արագածոտն	5.5	6.7	16.4	91.8	187
Արարատ	0.8	0.2	8.9	99.0	336
Արմավիր	2.7	2.5	21.6	96.1	347
Գեղարքունիք	2.3	10.0	19.0	88.2	319
Լոռի	7.5	4.4	22.4	92.1	360
Կոտայք	9.6	6.8	26.1	89.3	384
Շիրակ	2.1	1.1	17.2	97.9	414
Սյունիք	8.1	8.4	19.9	90.7	164
Վայոց ձոր	7.8	0.6	9.3	92.2	63
Տավուշ	5.1	2.5	35.7	94.7	170
Կրթություն					
Հիմնական ընդհանուր	0.9	0.8	19.5	99.0	432
Միջնակարգ ընդհանուր	3.8	3.8	23.1	94.3	1,582
Միջին մասնագիտական	5.8	4.2	25.7	92.9	1,281
Բարձրագույն	5.1	3.6	28.8	93.8	1,100
Բարեկեցության մակարդակ					
Ամենացածր	3.6	3.6	17.0	94.6	771
Ցածր	3.5	3.5	21.7	94.5	892
Միջին	2.9	2.4	26.4	95.9	894
Բարձր	5.5	3.5	30.0	93.7	911
Ամենաբարձր	6.5	4.9	28.2	92.6	927
Ընդամենը	4.5	3.6	24.9	94.2	4,395


5.13 ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆԸ

Հակաբեղմնավորման արդյունավետ մեթոդների օգտագործման ընտրությունը լինում է ճիշտ, երբ զույգն ունենում է դրական վերաբերմունք ընտանիքի պլանավորմանը: Համանման տեղեկատվություն է հավաքագրվել տղամարդկանց հարցմելով, թե արդյոք նրանք համաձայն են հետևյալ երեք հասկացողությունների հետ՝

- Հակաբեղմնավորումը, դա միայն կնոջ գործն է և տղամարդը չպետք է անհանգստանա այդ կապակցությամբ:
- Հակաբեղմնավորման մեթոդներ օգտագործելով կինը ձեռք է բերում անցանկալի սեռական ակտիվություն:
- Կինն է հղիացողը, այդ պատճառով հենց նա էլ պետք է մտածի ապահովության մասին:

Արդյունքները ներկայացված են Գծապատկեր 5.3-ում:

Տվյալները ցույց են տալիս, որ տղամարդկանց 1/5-րդ մասը կարծում է, թե հակաբեղմնավորումը միայն կնոջ գործն է, 1/4-րդ մասը նշել է, որ կինն է հղիացողը, այդ պատճառով հենց նա էլ պետք է մտածի ապահովության մասին, իսկ 13 տոկոսը նշել է, որ հակաբեղմնավորման մեթոդներ օգտագործելով կինը ձեռք է բերում անցանկալի սեռական ակտիվություն: Գյուղաբնակ տղամարդիկ ավելի շատ են հակված եղել համաձայնվելու յուրաքանչյուր ասվածի հետ, քան քաղաքաբնակ տղամարդիկ: Մասնավորապես հատկանշական է գյուղաբնակ տղամարդկանց 31 տոկոսի կարծիքը, որ հակաբեղմնավորումը, դա կնոջ գործն է և տղամարդը չպետք է անհանգստանա այդ կապակցությամբ:



Հակաբեղմնավորման մեթոդ օգտագործող ամուսնացած կանանց նույնպես տրվել է հարց, թե արդյոք նրանց ամուսինը տեղյակ է, որ իրենք օգտագործում են ընտանիքի պլանավորման մեթոդ: Գրեթե բոլոր կանայք (98 տոկոս) նշել են, որ իրենց ամուսինները տեղյակ են այդ մասին (տվյալները ներկայացված չեն):

5.14 ԻՐԱԶԵԿ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման վերաբերյալ որոշում կայացնելիս կանայք պետք է լիովին իրազեկ լինեն այդ մեթոդների կողմնակի հետևանքների և ռիսկի մասին: Աղյուսակ 5.19-ը ցույց է տալիս հարցման պահին հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդ օգտագործող այն կանանց տոկոսը, ովքեր տվյալ մեթոդն ընտրելիս իրազեկ են եղել մեթոդի կողմնակի հետևանքների, ինչպես նաև բուժաշխատողի կամ ընտանիքի պլանավորման աշխատակցի մոտ առկա այլ տարբեր հակաբեղմնավորման մեթոդների մասին:

Աղյուսակ 5.19 Իրազեկ ընտրություն			
15-49 տարեկան հարցման պահին հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդ օգտագործողների տոկոսը, ովքեր վերջին անգամ ձեռք են բերել օգտագործվող մեթոդը հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում, տվյալ մեթոդն ընտրելիս իրազեկ են եղել մեթոդի կողմնակի հետևանքների և գոյություն ունեցող այլ տարբեր մեթոդների մասին, ըստ մեթոդի և աղբյուրի, Հայաստան 2005			
Մեթոդ և աղբյուր	Մեթոդի կողմնակի հետևանքների մասին իրազեկ անձանց տոկոսը	Մեթոդի կողմնակի հետևանքների առաջացման դեպքում իրականացվող միջոցառումների մասին իրազեկ անձանց տոկոսը	Գոյություն ունեցող այլ մեթոդների մասին ընտանիքի պլանավորման աշխատակցից իրազեկված անձանց տոկոսը
Մեթոդ			
Հաբեր	(24.4)	(26.3)	(34.1)
ՆԱՄ	49.5	47.7	37.2
Մեթոդի ձեռքբերման աղբյուր¹			
Հիվանդանոց	(55.8)	(54.1)	(42.7)
Ծննդատուն	75.6	68.2	61.0
Կանանց կոնս. կենտրոն	(60.9)	(60.6)	(54.0)
Դեղատուն	(30.0)	(35.5)	(35.9)
Այլ	*	*	(28.8)
Տվյալ չկա	16.1	15.7	12.9
Ընդամենը	45.6	44.2	35.0

Նշում՝ Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Աստղանիշը ցույց է տալիս, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա և սեղմվել են: Աղյուսակում ներառված չեն այն օգտագործողները, ովքեր մեթոդը ձեռք են բերել ընկերներից կամ բարեկամներից:
¹ Հարցման պահին օգտագործվող մեթոդի ձեռքբերման վերջին աղբյուրը

Հակաբեղմնավորման մեթոդ օգտագործող կանանց գրեթե կեսը (46 տոկոս) իրազեկ է եղել կողմնակի հետևանքների և դրանց առաջացման դեպքում ձեռնարկվող միջոցառումների մասին (44 տոկոս): Այս ցուցանիշն աճել է ՀԺԱՀ-2000-ի արդյունքում ստացված նույն ցուցանիշի համեմատությամբ (համապատասխանաբար՝ 36 և 32 տոկոս): Մասնավորապես աճել է կողմնակի հետևանքների դեպքում ձեռնարկվող միջոցառումների մասին իրազեկ կանանց տոկոսը՝ ՀԺԱՀ-2000-ի արդյունքում ստացված 23 տոկոսից, մինչև 2005-ի՝ 35 տոկոս: Չնայած ՀԺԱՀ-ի արդյունքում գրանցված ցուցանիշի բարելավմանը, այնուամենայնիվ Հայաստանի պետական և մասնավոր հաստատությունների ու ընտանիքի պլանավորման աշխատակիցները հակաբեղմնավորման մեթոդների մասին պետք է ավելի շատ իրազեկեն կանանց, ինչն էլ կօգնի նրանց կատարել իրազեկ ընտրություն: